

5 829
Ծուեք Մանուկյանեան

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴ



ԱՐԺԱՎԱՐՈՒՄԸ

ՈՒ

ԹԶՈՒԿԸ

Թարգմ.

ԿԱՐ. ՄԻՐԻԱՆԵԱՆ

Թ. Ի Ֆ Լ Ի Ս

Ելիսա. ապ. Օր. Ն. Աղամենի Պոլից., 7.

1911

825

PL-13

-6 NOV 2011

Հ Ա Ր Ա Վ Ա Դ Ո Ւ Խ Ա Բ Ի Ւ Ն Ե Ր Ի Ւ Ն

Հ Յ

ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿԻՆԵՐԻՆ

82-93

ԴԻ-13

Օ Ս Կ Ա Ր Ո Ւ Ա Ց Լ Դ

Ա յ

Ա Ր Ք Ա Յ Ա Դ Ո Ւ Խ Ա Բ Ի Ս Ր Ն Ո Ւ Թ Ձ Ո Ւ Ի Կ Ը

| | |
|---|----|
| 1. Վայրի կարապներ (սպառուած) | 8 |
| 2. Առաջին վիշտ (սպառուած) | 10 |
| 3. Անտառապահը (սպառուած) | 12 |
| 4. Աշխենն ու Մարգարիտը (սպառ.) | 10 |
| 5. Աղքատի բախտը (սպառ.) | 5 |
| 6. Գոհարիկն ու Աստղիկը (սպառ.) | 10 |
| 7. Նելլօն ու Պատրաշը (սպառ.) | 10 |
| 8. Գիւղում (սպառ.) | 20 |
| 9. Կենդանի է արդեօք (սպառ.) | 8 |
| 10. Բարեկամներ (սպառ.) | 12 |
| 11. Առակներ բնական պատմովթիւնից (սպառ.) | 12 |
| 12. Մազնիս | 12 |
| 13. Արջի պատմովթիւն | 15 |
| 14. Ռզնիներ | 8 |
| 15. Թմբիլիկը (սպառ.) | 12 |
| 16. Հեռան աղջիկը (սպառ.) | 20 |
| 17. Բու | 12 |
| 18. Փոքրիկ Պարոյրի արկածները | 15 |
| 19. Փիղ | 8 |
| 20. Ռութէնի զրադմունքը | 25 |
| 21. Որը Աննան | 12 |
| 22. Արցոննը | 15 |
| 23. Անձնազու մանուկ | 11 |
| 24. Դարեւոր կաղնի | 6 |

100
100
100
100

Թարգմ.

ԿԱՐ. ՄԻՐԻՄՆԵՐԱՆ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Է Ր Ա Վ Ա Դ Ո Ւ Խ Ա Բ Ի Ս Ր Ն Ո Ւ Թ Ձ Ո Ւ Ի Կ Ը

1911

26.08.2013



ըրքայագստրի ծննդեան տարե-
դարձն է. Այսօր լրացել է
նրա տասներկուերորդ տա-
րին, և արեգակը պայծառ է
փայլում պալատի պարտէզ-
ներում:

Թէպէտ նա իսկական արքա-
յագուստը է և այն էլ իսպանիայի Խնֆանտան *)
բայց և այնպէս տարին միայն մի անգամ է
գալիս նրա ծննդեան օրը, ինչպէս չքաւոր
երեխաներինը. Եւ, հասկանալի է որ ամբողջ
աշխարհը ուղղում է, այդ օրը իրօք ուրախ անց-
նի արքայագստրի համար:

Եւ, իսկապէս, օրը շատ է գեղեցիկ: Վայել-
չակագմ բազմերանգ կակաչները ձիգ կանգ-
նած են իրենց ցօղունիկների վրայ, զինուոր-
ների երկար շարանների պէս, և յոխորտալից
նայում են լճակի հակադիր ափին բացուած
վարդերին:

— Այս կողմը նայեցէք, — ասում են նրանք,
մենք էլ գեղեցիկ ենք ձեզ նման:

Ծիրանաներկ թիթեռնիկները ոսկէփոշիով
ծածկուած թևիկները շարժելով թոթում են

*) Խնֆանտա նշանակում է արքայագուստը. այդպէս
են կոչում իսպանական արքայագուստարները:
Ճան, հայ թարգմ.

ծաղկից ծաղիկ, պատերի ճեղքերից դուրս են գալիս փոքրիկ մողէմներ ու տաքանում շացուցիչ կերպով փայլ տուող արևի ճառագայթների տակ։ Շոգից ճրթալով ճաքճրում են հասուն նոները ու ցոյց տալիս իրենց ալ, արնածոր սրտերը. իսկ կղբիները (մազնօլիաները) բաց են անում փղոսկրէ գնդակների նման խոշոր ծաղիկները և թանձր, անուշ բուրմունք ծաւալում օդի մէջ։

Արքայադուստրը իր տարեկիցների հետ պահմտոցիկ է խաղում տէրրասի վրայ, մամունկալ քարէ վազաների ու անդրիների մօտ։ Հասարակ օրերին արքայադուստրը իրաւունքունէր խաղալ միայն արքայազուն երեխաների հետ, այդ պատճառով նա միշտ մենակ էր խաղում. բայց այսօր բացառիկ օր է. և թագաւորը նրան թոյլ է տուել հրաւիրել իր բոլոր բարեկամներին, ում որ կըցանկայ։

Մրբան փառահեղ, նրբան նազելի են պարտէզում թռչկոտող խսպանացի նրբակազմ երեխաները։ Տղաները լայնեղը, փետրազարդ գըլ-խարկներ ունեն գլխին և կարճ, քամուց ծածանուող ուսմոցներ ուսին. իսկ աղջիկները դիպակէ զգեստների երկար վէշերը վեր քաշած և սևաթոյր, մեծ, արծաթազարդ հովհարները աչքերին պաշտպանուում են արևի լոյսից։

Բայց ամենից գեղեցիկը, ամենից չքնաղը ինքը արքայադուստրն է։ Նա մի առանձին

նուրբ ճաշակով է յարդարուած։ Մոխրագոյն զգեստի ստորին մասն ու թերը շքեղ է, արծաթաթելով կարած, իսկ ձիգ քաշած կորսաժը զարդարուած է խոշոր մարզարիտներով։ Քայլելու ժամանակ զգեստի տակից երեսում են վարդագոյն ժապաւէններով զարդարուած փոքրիկ մաշիկները։ Բարակ, նուրբ շղարշէ հովհարը մարզարտաշար է ամբողջովին, իսկ փարթամ մազերը, որ դալուկ ուկէշող փայլով պսակում են արքայադստրի նուրբ գեղամնի դէմքը, զարդարուած են չքնաղ սպիտակ վարդով։

Պալատի լուսամուտի մօտ տիսուր տրտում նստած է նրա հայրը, իսպանիայի թագաւորը ու նայում է խաղացող մանուկներին։ Թագաւորի բազկաթոռի մօտ կանգնած է Դոն Պեդրօ Արագոնացին, թագաւորի հարազատ եղբայրը, որին ատելով ատում է նա. իսկ կողքին նստած է իր խոստովանահայրը, Գրանադայի Մեծ ինկիզիտորը։ Թագաւորը սովորականից աւելի վշտոտ է։ Նա նայում է արքայադստրին, որը մանկական ծանրակշռութեամբ բարեկ է առնում իրեն շրջապատող պալատականներից և կամ հովհարի տակից հանաք է անում իր դաստիարակչունի Ալբուրեցի դքսուհու հետ։ Նայում է թագաւորը իր դստրին և իր վաղամեռիկ թագուհին է գալիս աչքի առջև։ Ու թըւում է նրան, որ շատ չի անցել այն օրից, երբ թագուհին եկաւ զուարժ ֆրանսիայից և ար-

քայադստրի ծննդից ուղիղ կէս տարի անց վախճանուեց խսպանական պալատի մդայլ ճոխութեան մէջ։ Նա մեռաւ, երբ նշենիները դեռ չէին ծաղկել թագաւորական պարտէգում, նա մեռաւ դեռ չճաշակած այն հինաւուրց թզենու պտղից, որ այժմ կանգնած է թանձր խոտով ծածկուած բակում։ Թագաւորը այնպէս բուռն էր սիրում թագուհուն. որ հրամայեց չթաղեն նրան։ Նա դմոսել տուաւ հանգուցեալի մարմինը։ Եւ ահա մինչեւ օրս, սև մարմարէ մատուռում, գորգերով զարդարուած դագաղի մէջ պառկած է թագուհին, հէնց այնպէս, ինչպէս որ մի տխուր, մի գարնանային օր, մօտ տասներկու տարի սրանից առաջ դրել էին վարդապետները։ Ամիսը մի անգամ թագաւորը գորշ ուսնոց գցած, գաղտնուկ լապտերը ձեռքին այցելում է մատուռը և դագաղի առջեւ ծունը դրած հառաշում։ «Ո՞հ, թագնեհի, ոհ, իմ թագուհի...» Եւ քանի՛-քանի՛ անգամ արքունի կարգ ու կանոնը մոռացած, խելագար յուսահատութեան մէջ նա պինդ-պինդ բռնել է թագուհու ձեռքերը և աշխատել ջերմ համբոյրներով վերստին կեանք տալ նրա սառած դէմքին։ Եւ այժմ թւում է նրան, թէ թագուհին իր աշքի առջեւ կանգնած է այնպէս, ինչպէս առաջին անգամ տեսել էր ֆրանսիայում, երբ ինքը հազիւ տասն և հինգ տարեկան պատանի էր, իսկ թագուհին շատ աւելի փոքր։

Եւ մինչ թագաւորը դիտում էր տէրրասի վրայ խաղացող արքայադստրին, նրա աչքի առջեւ կարծես անցնում դառնում էր իր ամբողջ ընտանեկան կեանքը, որ այնպէս լի էր վառ, ջերմ ուրախութիւններով և որը վերջացաւ այնպիսի անակնկալ, ողբերգական մահով։ Արքայադուստրը նմանում է թագուհուն իր գեղանի, աշխոյժ շարժ ու ձեռվ, գլխի ազատ համարձակ շարժումներով։ Արքայադուստրը նման է թագուհուն իր չքնաղ, սիրապանծ բերանի նուրբ գծագրերով և վերջապէս իր սքանչելի բուն «ֆրանսիական» ժպիտով, որ միշտ փայլում է նրա դէմքի վրայ, երբ արագ հայեացք է նետում լուսամուտի կողմը և համբուրելու համար իր փոքրիկ ձեռքը մեկնում որևէ փառահեղ իշխանի։

Բայց մանկական կարկաչուն ծիծաղը վըրդովում էր թագաւորին, իսկ պայծառ արևը կարծես անգթօրէն ծիծաղելիս լինէր նրա տանշանքների վրայ։ առաւօտեան յստակ օդում թագաւորը զգում էր հազիւ զգացուող հաճելի բուրմունքն այն նիւթերի, որ գործ են ածւում զմոսման ժամանակ։ Ո՞վ գիտէ, գուցէ միայն թւում էր նրան։ Ահա նա ձեռքերի մէջ առաւ դէմքը, և երբ արքայադուստրը կրկին անգամ նայեց լուսամուտի կողմը, տեսաւ, որ վարագոյնները քաշած են, իսկ թագաւորը չկայ։

Արքայադուստրը դժգոհութիւնից թոթուեց

ուսերը. գոնէ ծննդեան տարեղարձը իր հետ անց կացնէր նա։ Հօ չի կարելի շարունակ զբաղուել այդ զզուելի պետական գործերով։ Երեխ նա գնացել է այն քմուայլ մատուռը, որտեղ մշտապէս մոմեր են զվառած և ուր երբէք թոյլ չեն տալիս, որ մտնի ինքը։ Եւ հրտեղից յիշեց նա իր մուայլ մատուռը, երբ այսպէս պայծառ լոյս է սփոռում արեց ու այսպէս երջանիկ, այսպէս ուրախ են ամենքը։ Ախր նա կըզրկուի ոչ միայն մարիօնետների¹⁾ ներկայացումից և միւս հրաշալի հանդէմներից, այլ նոյն իսկ խաղալիքային ցլամարտից, որի համար արդէն հրաւէր էին կարդում հնչուող փողերը։ Հօրեղբայրն ու Մեծ Ինկլիզիտորը անհամեմատ աւելի ուշադիր են դէպի իրեն։ Ահա նրանք դուրս եկան տէրրաս և սիրալիր բարեւում են իրեն։ Եւ արքայագուստը իր գեղեցիկ գլխիկը բարձր պահելով բռնում է Դոն Պեղոսի ձեռքը և կամացուկ իջնում աստիճաններով դէպի կարմիր մետաքսէ երկարածիգ տաղաւարը, որ զարկուած է այգուայն ծայրում։ Նրանց յետնից գալիս են միւս երեխաները՝ իրենց ծագման բարձրութեան համեմատ, առջնից ամենահին տոհմերի զաւակներն են գընում։

Արքայադստրին ընդ առաջ դուրս եկաւ

¹⁾ Լարաւոր, զսպանակաւոր շարժուն տիկնիկներ թաւերական խաղերի համար յարմարեցրած։ Ծան. հայ թարգմ.

ցլամարտիկների զգեստներ հազած տղաների մի խումբ։ Կոմս Տիէրա-Նուռվան, տասնուշորս տարեկան մի չքնաղ պատանի, ողջունեց արքայադստրին իսպանիայի ասպետի ու վսեմ ազնուականի բնատուր գեղանիութեամբ և առաջնորդեց նրան դէպի մարտադաշտի առաջ գտնուող բարձրաւանդակը, ուր փըղուկը ոսկէկուռ մի մեծ բազկաթոռ էր դրուած։ Նրա շուրջը տեղաւորուեցին երեխաները, մեծ հովհարները շարժելով և իրար հետ կամացուկ խօսելով։ Դոն Պեղոսն ու Մեծ Ինկլիզիտորը ժպիտն երեխին կանգնեցին դռան մէջ։ Մինչև անգամ դքսուհին, որ «աւագ սենեկաւշետուհու» պաշտօն էր վարում պալատում, մի նիհար, սուր դիմագծերով տիկին, դեղին ժանեակներով զարդարուած, մինչև անգամ նա իր սովորական ժանգ տեսքը չունի այսօր։ Նրա կնճուտ դէմքի վրայ հազիւ նշմարելի սառը ժպիտ է խաղում, որից ծոմուռում են նրա գունատ բարակ շթունքները։

Ցլամարտն իսկապէս շատ յաջող անցաւ. արքայադուստրը այս աւելի հաւանեց, քան այն իսկական ցլամարտը, որ իրեն ցոյց էին տուել Սէւիիէյում, երբ Պարմացի դուքսը հիւր էր իր հօր մօտ։ Ցլամարտիկ տղաներից մի քանիսը փայլում էին շքեղ ծածկոցներով զարդարուած խաղալիք ձիերի վրայ։ Նրանք ճօճում էին պայծառ ժապաւէնների երփներանդ վնջերով

զարդարուած երկար նիզակները. միւսները հետևակ էին, նրանք ցլի առաջ փողփողում էին վառ կարմիր ուսնոցները և ճարպիկ կերպով ցատկում պատնէշի վրայով, հէնց որ կենդանին յարձակում էր գործում իրենց վրայ: Իսկ ինքը ցուլը բոլորովին նման էր իսկականին, թէպէտ և սարքուած էր կաշուով պատած ուռի ճիպուներով և մի-մի անգամ էլ յամառօրէն քայլում էր յետեկի թաթերի վրայ, մի բան որ երբէք չի անի իսկական ցուլը: Այնուամենայնիւ հըրաշալի կերպով պաշտպանւում էր նա, և երեխաները ոգեսրուելով կանգնում էին նստարանների վրայ. ծածանում էին ժանեակաւոր թաշկինակները ու աղաղակում. «Կեցցէ ցուլը, կեցցէ ցուլը», իսկ և իսկ մեծերի նման, խելացի կերպով: Վերջապէս երկարատե կոուից յետոյ, երբ ծիերից շատերը խոցուած էին կարէվէր, իսկ ծիաւորները թամքերի վրայից ընկած, կոմս Տիէրա Նուովան յաջողեց չոքեցնել ցլին. իսկ երբ արքայադուստը թոյլ տուաւ վերջին հարուածը հասցնել, նա այնպիսի թափով միսեց փայտէ սուրը ցլի պարանոցի մէջ, որ գլուխն անմիջապէս թրոցրեց, և տեղը դուրս ցցուեց կոմս դը-Լուռնի, Մադրիդի ֆրանսիական դեսպանի որդուժպտուն դէմքը: Այնուհետեւ մարտադաշտը մաքրեցին որոտընդոստ ծափահարութիւնների տակ. դեղնաւուն-սև զգեստ հագին երկու արաբ

մանկլաւիկներ հանդիսաւոր կերպով դուրս տարան ընկած ծիերի դիակները: Տեղի ունեցաւ փոքրիկ ընդմիջում, որի ընթացքում ֆրանսիացի մի լարախաղաց վարժութիւններ էր անում պարանի վրայ: Այնուհետեւ յատուկ այդ օրուայ համար շինած փոքրիկ թատրոնի բեմի վրայ, մի քանի իտալական մարիօնետներ նուագեցին կլասիք «Սօֆօնիսբա» ողբերգութիւնը: Այնքան գեղեցիկ էին նուագումնրանք, այնպէս բնական էին նրանց շարժուածքները, որ ներկայացումը վերջանալիս արքայադստրի աչերը արցունքով լցուեցին: Միւս երեխաներն ուղղակի սկսեցին լաց լինել և նրանց հազիւ հազ կարողացան կօնֆէտներով հանգըստացնել:

Ապա հանդէս եկաւ մի աֆրիկական կախարդ. նա բերեց մի մեծ կողով վրան կարմիր շոր գցած ու դրաւ մարտադաշտի մէջտեղը, զլիսի փաթթոցից հանեց եղեգնէ մի ծիծաղարժ շուի և սկսեց նուագել: Մի քանի ըոպէից ծածկոցը շարժուեց և հետզհետէ աւելի զիլ հնչուող երաժշտութեան նուագների ներքոյ երկու կանաչաւուն-սկէզոյն օձիկներ ծածկոցի տակից դուրս հանեցին իրենց սուր զլիսիկները և մկնեցին կամաց-կամաց բարձրանալ. երաժշտութեան նուագակցութեամբ նրանք ոլոր-մոլոր ծումռում էին իրենց մարմինները, ասես՝ Դրիմուռներ լինէին վազկան ջրի մէջ բռւսած:

Բայց երեխաները, երևի, նրանց բծաւոր գլխիկ-ներից ու սլաքաձև լեզուակներից վախեցած, այնքան էլ չհաւանեցին այդ խաղը. նրանք աւելի ուրախացան, երբ կախարդը մի շատ փոք-րիկ նարնջի ծառիկ բուսցրեց աւազից. ծառի-կի վրայ անմիջապէս բացուեցին սպիտակ գե-ղեցիկ ծաղիկներ, իսկ նրանք էլ մի ակնթար-թում դարձան իսկական նարինջներ:

Բայց երեխաների ուրախութեան ու հի-ացումին չափ ու սահման չկար, երբ կա-խարդը մի աղջկայ ձեռքից հովհարը վերցնե-լով կապոյտ թռչուն դարձրեց, և թռչունն սկսեց երգելով թռչել տաղաւարի մէջ:

Այնուհետեւ մարտադաշտի վրայ երևա-ցին գեղեցիկ եգիպտացիներ (այն ժամա-նակ այդպէս էին անուանում գնչուներին): Նրանք ծալապատիկ նստելով, շրջան կաղ-մեցին և սկսեցին քնքօրէն նուագել, նուա-գում էին, հետն էլ կիսածայն ինչ որ ցնորա-կան եղանակ երգում և նուագի տակտով ճօճ-ւում. նրանք ուղղակի յափշտակուեցին սիրուն արքայազստրով, որը բազկաթոռի մէջքին յենուած, հովհարի տակից իրենց էր ուղղել կապոյտ, խոշոր աչերը: Նրանք այնպէս քըն-քուշ էին նուագում իրենց մեղմիկ եղանակը, որ երկար սուր եղունգները համարեա չէին հպւում գործիքի լարերին. ապա հետզհետէ սկսեցին խոնարհել գլուխները ասես թէ քնելու էին պատ-

րաստում: Յանկարծ լսուեց նրանց զիլ ձիչը, երեխաները ցնցուեցին վախից, իսկ Դոն Պեղ-րօն ձեռքը ձգեց դաշոյնի ագատէ կոթին. նուագ-ածուները վեր թռան և սկսեցին կատաղի պարել մարտադաշտում, ծնծղաները զարկելով և վայրի սիրոյ երգ ասելով իրենց տարօրինակ կոկորդային լեզուով: Ապա յանկարծակի գետին փոռուեցին ու անշարժացան: Միայն լարերի մարող նուագներն էին հնչւում լոռութեան մէջ: Այս պարը մի քանի անգամ կրկնելով, վեր կացան, գնացին. բայց շուտով վերադարձան սրճագոյն բրդոտ արջ քաշ տալով իրենց յետե-ւից և մի քանի հատ էլ բերբերիական փոքրիկ կապիկ նստեցրած ուսերին: Արջը ծանր ու մեծ կանգնում էր գլխի վայր, իսկ ձեռնասուն կա-պիկները զանազան ծիծաղաշարժ վարժութիւն-ներ էին կատարում երկու փոքրիկ գնչուների հետ միասին—ինչպէս երևում է կապիկները պատկանում էին այդ փոքրիկ գնչու տղանե-րին. կապիկները մենամարտում էին փոքրիկ սրերով, հրացան էին արձակում և քայլում իրար յետեւից իսկ և իսկ թագաւորի թիկնապահների նման:

Գնչուները սաստիկ դուր եկան բոլորին:

Բայց այդ ցերեկոյթի ամենաուշագրաւ տեսարանը անպայման փոքրիկ թզուկի պա-րերն էին կազմում: Երբ նա մարտադաշտ դուրս եկաւ ծուռու մուռո ոտիկները քաշ տա-

լով ու մեծ, այլանդակ գլուխը այս ու այն կողմ ճօճելով, երեխաներն սկսեցին ուրախուրախ հոհուալ։ Արքայադստրի բարձրածայն ծիծաղի առիթով աւագ սենեկապետուհին մինչև իսկ կարենոր համարեց նկատել, որ թէպէտ իսպանիայում շատ անգամ տեղի են ունեցել այնպիսի դէպքեր, երբ թագուհիները լաց են եղել իրենց համահաւասար անձերի շրջանում, բայց երբէք չի պատահել, որ արքայադուստրը այդ աստիճան ուրախանար ծագումով իրենից ցածր կանգնած մարդկանց առաջ։

Բայց թզուկն իսկապէս մի ուրիշ տեսակ բան էր. մինչև իսկ իսպանական պալատը, որ միշտ աշքի է ընկել իր անսովոր հակումով դէպի այն ամենը, ինչ որ սոսկալի է, երբէք այդպիսի օտարոտի փոքրիկ հրէշ չէր տեսած։ Բացի այդ թզուկի երևալը կատարեալ նորութիւն էր պալատում։ Երկու պալատական որս անելիս պատահմամբ գտել էին նրան քաղաքի շուրջը գտնուող խցանափայտի անտառի մի խուլ անկիւնում վազվելիս։ Թզուկին բռնել բերել էին պալատ, որպէս մի անակնկալ արքայադստրի համար։

Նրա հայրը, որ մի խեղճ ածխարար էր, շափազանց ուրախ էր այզպիսի այլանդակ, միանգամայն անպէտք զաւակից ազատուելու համար։ Բայց ամենածիծաղելին այն էր, որ թզուկն ամենակին չէր զգում իր ծիծաղաշարժ

լինելը։ Ըստ երկոյթին նաև կատարելապէս գոհ էր և գուարթ։ Նա ծիծաղում էր նոյնքան անհոգ և ուրախ, որքան երեխաները. ամեն անզամ պարը վերջացնելուց յետոյ նա մի անսովոր կերպով բարենում էր երեխաներին՝ ժպտալով ու գլուխ տալով, կարծես թէ ոչ մի բանով տարբերուելիս չլինէր նրանցից և փոքրիկ անճոռնի արարած չլինէր, բնութեան քմահաճոյքով աշխարհ եկած, իբրև ծաղր ու ծանակի առարկայ ուրիշների համար։ Արքայադուստրը ուղղակի խելահան արաւ թզուկին։ Նա արքայադստրից չէր հեռացնում աչքը և կարծես թէ միմիայն նրա համար էր պարում։ Պարահանդէսի վերջը, արքայադուստրը կամենալով պալատական սէգ տիկիններին նմանուել, հանեց սքանչելի սպիտակ վարդը իր մազերից և թովիչ ժպիտով նետեց թզուկին—նրան ծաղրելու, իսկ սենեկապետուհուն բարկացնելու նպատակով։ Թզուկը լուրջ ընդունեց այդ և տարաւ իր բորբոքուած շրթունքներին սեղմեց ծաղիկը. նրա աչքերը փայլում էին ուրախութիւնից, լայն, մինչև ականջները համսող ժպիտն երեսին՝ ձեռքը սեղմեց կրծքին ու մի ծունկի վրայ եկաւ արքայադստրի առջև։ Այստեղ արդէն վերջնապէս անհետացաւ արքայադստրի լրջութիւնը։ Թզուկի գնալուց յետոյ նա Դոն Պեդրօին յայտնեց իր ցանկութիւնը պարը անմիջապէս կրկնելու մասին։ Բայց սենեկապետու-

հին պատճառ բռնելով թէ շոգ է, յայտարարեց, որ արքայադուստրը իսկոյն պէտք է ուղերուի պալատ, որտեղ նրա համար ճոխ նախաճաշ է պատրաստուած շնորհաւորական տորտով, որի վրայ գտնւում են՝ նրա ազգանուան սկրզնատառերը երփներանգ շաքարից, և մի գեղեցիկ արծաթէ դրօշակ էլ վերևից։ Արքայադուստրը վսեմօրէն վեր կացաւ, հրամայեց, որ թզուկն իր պարերը նախաճաշից յետոյ կրկնի, ապա շնորհակալութիւն յայտնեց կոմս Տիէրա Նուովային սքանչելի ընդունելութեան համար ու գնաց պալատ։ Նրան հետևեցին մանուկները նոյն կարգով, ինչպէս որ եկել էին։

Թզուկն, երբ իմացաւ, որ արքայադստրի յատուկ ցանկութեամբ ինքը պէտք է վերստին պարի, այն աստիճան ուրախացաւ, որ վազեց պարտէզ և ծիծաղաշարժ հիացման մէջ սկսեց թոչկոտել ամենաօտարոտի ու անվայել ձեռվ, շուտ-շուտ էլ համբոյրներ դրօշմելով սպիտակ վարդի վրայ։

Ծաղիկները խիստ վիրաւորուեցին, երբ տեսան որ իրենց չքնաղ բնակավայրը յանդուզն արշաւանքի է ենթարկուած։ Նրանք չէին կարող բարձրաձայն իրենց զայրոյթը չարտայատել թզուկի թոչկոտելն ու ծիծաղելի շարժուածքները տեսնելով։

— Զափից դուրս անճոռնի է նա ու չպէտք է թոյլ տանք զուարձանալ այստեղ, ուր մենք

ենք գտնւում, — բացականչեցին կակաչները։ — Պէտք է խաշխաշի հիւթով արբեցնել, որ յաւիտեանս քնած մնայ, չզարթնի, — բարկութիւնից կարմրատակած ասին կարմիր շուշանները։

— Ի՞նչ այլանդակն է, — Փշշաց կողին (կակտուսը), — ի՞նչ զարշելի արարած է, մի գլխին նայեցէք՝ ամենակին չի համապատասխանում ոտներին։ Գիտէք ինչ — ես զգում եմ, որ փշերս բիզ-բիզ են կանգնում նրան տեսնելիս, իսկ եթէ յանդգնի ինձ մօտենալ, բոլոր փշերովս կը ծակծկեմ նրան։

— Լաւագոյն ծաղիկս համարձակւում է ձեռքին բռնել, — բացականչեց սպիտակ վարդի թուփը։ — Այդ ծաղիկը ես եմ նուիրել արքայադստրին ծննդեան տարեղարձի առիթով, իսկայս հրէշը գողացել է նրանից։ — Ու սպիտակ վարդի թուփը բարակ ձայնով սկսեց կանչել՝ Գող, գող, գող։

Թոչուններն էին միայն որ սիրում էին թզուկին։ Նրանք քանի-քանի անգամ տեսել էին թզուկին անտառի մէջ էլֆի^{*)} պէս վազգելիս, երբ նա ընկնում էր օդում թոչող տերևների յետելից։ Քանի-քանի անգամ տեսել էին նրան սկիւռներին ընկոյզով կերակրելիս հինաւորց կաղնու փչակում կուչ եկած։

^{*)} Էլֆ — կէս մարդկային, կէս աստուածային առասպելական թզուկ։



Օպանոթ.

Հայ թարգմ.

Թուչունները չեին գարշում թզուկի այլանդակութիւնից։ ԶԵ՞ որ սոխակն էլ գեղեցիկ չեր արտաքուստ, բայց այնպէս սքանչելի դայլայլում էր մեղմ գիշերներին, որ ինըը լուսինը կանգ առնում ականջ էր դնում նրա գեղգեղանքին։ Բացի դրանից թզուկը միշտ սիրալիր էր դէպի թուչունները և վերջին ցըտաշունչ ձմեռը, երբ ծառերի վրայ ոչ մի հատապտուղ չեր մնացել, գետինն էլ սառել պնդացել էր երկաթի նման, իսկ դայլերը քաղցի ձեռից գալիս հասնում էին մինչև քաղաքային դռները, — թզուկը չեր մոռանում իրենց և, ինչքան էլ որ աղքատիկ լինէր իր ճաշը, նա միշտ բաժին էր հանում իր սկ հացից։

Ահա թէ ինչու նրանք թոթուում պտտում էին թզուկի գլխին անդադար ծլւալով և իրենց թկիկները համարեա նրա այտերին հպելով։ Թզուկը ուրախութիւնից էլ չհամբերեց, ցոյց տուաւ նրանցիր չընաղ վարդը ասելով, որ ինըը արքայադուստրն է նուիրել իրեն ի նշան սիրոյ։

Թուչունները բան չհասկացան նրա ասածից, բայց դա իհարկէ ոչ մի նշանակութիւն չունէր։

Մողէսներն էլ շատ էին հաւանում նրան։ Ամեն անգամ, երբ թզուկը թուչկոտելուց յոգնած ընկնում էր կանաչի վրայ, նրանք ցատկում վազվում էին շուրջը, որ զուարձացնեն նրան։ — Ամեն արարած հօ չի կարող մողէսնե-

րիս նման գեղեցիկ լինել, — ասում էին նրանք, — չի կարելի այդպիսի մեծամեծ պահանջներ անել։ Եւ վերջապէս աչքդ որ փակես ու վրան չնայես, այն ժամանակ ամենեին այնպէս այլանդակ չի երկայ նա։

Մողէսների ու թուչունների վարմունքը ուղղակի կատաղեցրեց ծաղիկներին։ — Պարզ երկում է, — ասում էին նրանք, — թէ որքան գոեհկացնում է այս մշտական ծլւոցն ու թոչկոտելը։ Մեզ պէս կարգին կրթութիւն ստացած էակները միշտ միենոյն տեղն են մնում։ Ո՞վ է տեսել մեզ արդեօք շաւիդներում վազվուիլիս, կամ խելագարի պէս ծղրիտների յետեից ընկած նըրանց որսալիս։ Ու ծաղիկները հպարտ-հպարտ վեր ցցեցին իրենց գլխիկները։ Բայց նրանց բարկութեանը էլ չափ ու սահման չկար, երբ տեսան, որ թզուկը վերկացաւ կանաչի վրայից ու քայլերն ուղղեց դէպի պալատը։

— Պէտք է բռնես ցմահ բանալ ձգես, — զայրացած ասում էին ծաղիկները։ — Մի նրա սապատին, մի նրա ծուռումուռ ոտքերին նայեցէր է, — հեգնում էին նրանք։

Իսկ թզուկը ամենեին չեր նկատում այդ։ Նա շատ էր սիրում և մողէսներին և թուչուններին, իսկ ծաղիկները հօ, նրա կարծիքով, աշխարհիս ամենաչընաղ արարածներն էին արքայադստրից յետոյ։

Արքայադստրը... Ա՛հ, բոլորովին ուրիշ

գարունքին: Նրան յայտնի է, թէ վայրի աղաւնիները որտեղ են շինում իրենց բոյնը, և մի օր, երբ մատղաջ աղաւնիների մի զոյգ որսորդի ցանցի մէջ էր ընկել, թզուկը վեր առաւ նրանց և պահում էր կտրած ուռենու փչակում շինած բոյնի մէջ: Թոշունները բոլորովին ընտելացել էին իրեն և ամեն առաւօտ գալիս էին նրա ձեռքից կուտ ուտելու. այդ աղաւնիներին անկասկած շատ կրնաւանի արքայադուստրը: Նրան գուր կրգան նաև խիտ պտերների մէջ ցատկող ճագարները, այլ և գորշագոյն ճայերը սև կտուցներով, արագ կծկուղ փշոտ ողնիները, ծանր ու մեծ կրիաները, որոնք քայլում են դանդաղօրէն, գլուխները ճօճելով ու մատղաշ տերևներ. կը ծելով: Ոչ, արքայադուստրը անպատճառ պէտք է հիւր գայ իրեն մօտ:

Իր սեփական փոքրիկ անկողինը կը տայ նրան և ամբողջ գիշեր կը հսկի պատուհանի տակ, որ վայրի գաղանները չյարձակուեն արքայադրստրի վրայ, իսկ քաղցած գայլերը շատ չմօտենան հիւղին, կուսաբացին կը բաղխի փեղկերը, կը զարթեցնի նրան, և երկուսով ամբողջ օր կը պարեն անտառում: Ի՞նչպէս կարելի է այնտեղ ձանձրանալ: Երբեմն եպիսկոպոս է անցնում սպիտակ ջորու վրայ նստած, պատկերազարդ գիրք կարդալով. երբեմն որսորդներ են անցնում կանաչ թաւշէ գլխարկներով ու եղջերուենու բաճկոններով, նրանց ձեռքերին փեղոյրածածկ բազէներ

բան է արքայադուստրը, չէ՞ որ նա է նուիրել իրեն հրաշագեղ սպիտակ վարդը և բացի դրանից սիրում էլ է իրեն: Թզուկը սաստիկ ուզում էր դարձեալ նրա հետ լինել: Արքայադուստրը իր աջ կողմը կը նստեցնի իրեն ու կը ժպտայ, իսկ ինքը երբէք մենակ չի թողնի նրան: Նրանք երկուսով կը խաղան ամեն տեսակ խաղեր. նա զանազան արտակարգ բաներ կը սովորեցնի արքայադրստրին. ճիշտ է, թէ պէտ ոչ մի ժամանակ պալատ չի տեսել, բայց շատ ու շատ զարմանալի գուարձալիքներ գիտի նա: Եղեգնից վանդակներ է շինում երգող ծղրիտների համար, բամբուկի երկար ձողերից շուիներ է պատրաստում ու նուագում, Պանը *) ուղղակի զմայլում է այդ նուագներով: Նրան ծանօթ է իւրաքանչիւր թոշունի ձայնը և նա հրապուրելով կարող է դէպի իրեն քաշել սարեակին ծառի վրայից, արագիլին ճահճի միջից: Նա կարողանում է տարբերել ամեն մի գաղանի ոտնատեղը և գտնել նապաստակին նրա թաթիկների թեթև հետքով, իսկ վարագին՝ կոխոտած տերեներով: Նա գիտէ քամու բոլոր պարերը — աշնանային սրբնթաց պարը ծիրանի զգեստով. կապոյտ մաշիկներով օղային պարը դաշտերում. ձըմեռային պարը ծիւնէ ճերմակ ծաղիկներով և պտղատու ծառերի վրայ ծաղկաթերթերի պարը

*) Անտառի ոգի կամ աստուած:
Ծան. հայ թարգմ.

Են նստած լինում։ Այգեկութի ժամանակ գինի ճմլողներ են գալիս ձեռքերն ու ոտքերը կարմիր հիւթի բծերով ծածկուած։ Նրանց գլուխները զարդարուած են լինում փայլուն բաղեղի պսակներով, իսկ ձեռքին տկնոր են ունենում բռնած կաթկիթող գինիով։ Այդպէս է ցերեկը։ Իսկ գիշերը ածխարարները մեծ խարոյկների շուրջը նստուած, դիտում են, թէ ինչպէս կրակի մէջ այրւում է ցախը և հետն էլ շագանակ են բուվում։ Ճշմարիտ որ տեսնելու շատ բան կայ անտառում։ Իսկ երբ արքայադուստրը կըյօդնի, կակուղ մամուռի անկողին կըտնի նրա համար և կամ կառնի ձեռքի վրայ կըտնի նրան, թէպէտ ինքը կարճահասակ է (այդ բանը նա գիտէ), բայց սաստիկ ուժով է։ Լօշտակի կարմիր պտուղներից մանեակ կըշինի նրա համար. այդ հատապտուղները ի՞նչով են պակաս նրա զգեստի վրայ գտնուող սպիտակ մանրիկ գնդակներից. իսկ եթէ մանեակը ձանձրացնի նրան, թող դէն ձգի. մի ուրիշ, աւելի հետաքրքրական բան կըճարի նրա համար։ Յօղաթաթախ կաղինների ու պուտերի բաժակներ կըժողովի և փոքրիկ լուսատտիկներ կըբռնի նրա համար. աստղիկների պէս կըփալփլեն այդ լուսատտիկները նրա բաց ոսկէգոյն մազերի մէջ։

— Բայց որտեղ է արքայադուստրը, — հարցրեց նա սպիտակ ծաղկին. սպիտակ ծաղիկը պատասխան չտուաւ նրան։

Կարծես թէ ընած լինէր ամբողջ պալատը. բոլոր անփեղկ պատուհանները ծածկուած էին ծանր վարագոյններով, այնպէս որ օրուայ լոյսը չէր կարող ներս թափանցել։ Թղուկն ուղում էր պալատ մտնել, նա այս ու այն կողմ ընկաւ և վերջապէս նկատեց, որ մի փոքրիկ դոնակ բաց է մնացել, ներս վազեց ու մտաւ մի շքեղ դահլիճ։ — Անշուշտ, այս դահլիճը անտառից էլ գեղեցիկ է, — վախով մտածում էր նա։ Ամբողջ դահլիճը շողշողում էր ոսկու պէս, իսկ յատակը սալարկած էր կանոնաւոր նախշեր կազմող գունաւոր շերտաքարով։ Բայց արքայադուստրը չկար։ Միայն յասպիսէ պատուանդանների վրայ դրած մի քանի գեղեցիկ սպիտակ անդրիներ տարօրինակ կերպով ժըպտալով տիսուր նայում էին նրան իրենց անբիբ աշքերով։

Մի պատից սև թաւշէ վարագոյր էր կախուած, վրան ասղնեգործած էին արեգակներ ու աստղեր՝ դա թագաւորի սիրած գոյնն էր ու նրա սիրելի խորհրդանշանը։ Գուցէ այդ վարագոյրի յետեն է արքայադուստրը։ Պէտք է տեսնել։ Նա կամացուկ մօտենալով բարձրացրեց վարագոյրը։ Ո՛չ, այնտեղ երևում էր մի ուրիշ սենեակ, որը աւելի գեղեցիկ էր թւում թղուկին, բան նախընթացը։ Պատերը պաստառած էին կանաչ լաթով, իսկ վրան նկարուած էին որսի տեսարաններ. այդ պատկերները

նկարել էր ֆլամանդացի մի նկարիչ, մօտ եօթը
տարի աշխատելով նրանց վրայ։ Այստեղ եր-
բեմն ապրում էր Խօհան թագաւորը, որ շատ
որսասէր մի անձնաւորութիւն էր։

Թզուկը ապուշ կտրած նայում էր դէս-դէն,
վախենում էր առաջ գնալ։ Այս տարօրինակ
լուռ որսորդները, որ այնքան սըընթաց ու
այնպէս անազմուկ արշաւում էին երկարածիգ
ծառուղիների միջով, կարծես այն սոսկալի
ուրուականները լինէին, որոնց մասին պատմում
էին ածխարարները, թէ նրանք ուշ գիշերն են
որսի դուրս գալիս և մարդու հանդիպելով եղ-
ջերու է դարձնում նրան ու ընկնում յետևից։
Բայց չընալ արքայադստրին մտաբերելով
քաջալերուեց նա և փափագում էր մեն-մենակ
տեսնել նրան ու ասել, որ ինքն էլ սիրում է
փոխադարձաբար։ Մակայն գուցէ հետևեալ սե-
նեակումն է նա։

Վազեց արաբական կակուդ գորգերի վրա-
յով ու բաց արաւ դուռը։ Այստեղ էլ չկար
արքայադուստրը՝ սենեակը բոլորովին ամայի
էր։

Սա գահական դահլիճն էր թագաւորի անձ-
նական ունկնդրութիւնների համար. թագաւո-
րը այդտեղ էր ընդունում օտար երկիրների
դեսպաններին, այն էլ շատ սակաւ։ Դահլիճի
պատերը պատած էին կորդովայի կաշուով,
սպիտակ նախշուած սևաներկ առաստաղից կախ-

ուած էր մի մեծ երեք հարիւր մոմանոց ջահ։
Գահոյքը դրուած էր ոսկեթել դիպակէ ահագին
ամպովանու տակ, ուր կախուած էր կաստիլիա-
կան մարգարտակուռ տոհմանիշը՝ առիւծներ
ու աշտարակներ։ Գահոյքի վրայ սև թաւշէ
ծածկոց կար գցած, վրան կարած էին արծա-
թէ կակաչներ, իսկ ծածկոցի բոլորը արծա-
թից էր՝ մարգարիտներով կարած։

Բայց այս շքեղութիւնը տպաւորութիւն
չէր գործում թզուկի վրայ։ Եթէ ամպհո-
վանու բոլոր թանգագին քարերը խոստանային
իրեն, այնուամենայնիւ նա իր վարդը չէր տայ
փոխարէն, և մի հատիկ ծաղկաթերթն անգամ
չէր զիջի նա, եթէ նոյն իսկ թագաւորական
գահը տային իրեն։ Թզուկը մի փափագ ունէր
միայն, նա ուզում էր արքայադստրին տես-
նել մինչև տաղաւար վերադառնալը, որպէսզի
անտառ հրաւիրէր նրան պարերը վերջանալուց
յետոյ։ Պալատի սենեակներում օդը այնպէս
ծանը ու խեղդուած է, իսկ անտառում ազատ
փչում է քամին և արևի ճառագայթների ոսկէ
ձեռքերը թափանցում են դողդոջուն սաղարթ-
ների միջով։ Գուցէ անտառի ծաղիկները այն-
պէս շքեղ չեն, ինչպէս այստեղ, պարտէզում,
բայց դրա փոխարէն նրանք աւելի բուրաւէտ
են. այնտեղ յակինթներ կան, որ գարունքին
ծիրանի գորգի պէս սփռւում են կանաչով
ծածկուած խոնաւ բարձրաւանդակների ու բը-

լուրների վրայ. կաղնիների հանգուցաւոր արմատների արանքներում փունջ-փունջ բնում են դեղին ձնծաղիկները. պայծառ կանթեղիսոտ, կապտաչեայ բերենիկէ, ոսկէփայլ ու մանիշակագոյն լալազարներ էլ կան հոտոտ ու սիրուն: Կաղնու ճիւղերից կախկիսուած են մոխրագոյն փշփշուկներ, մատնետունկը կուացել է մեղուներով լի իր բծաւոր բաժակների ծանրութեան տակ. շագանակի ծառերը ծաղկում են սպիտակ աստղիկների բուրգերի նման, իսկ մասրին փալփլում գեղեցիկ գունատ լուսնեակների պէս: Պարզ է, որ արբայագուստը կերթայ իրեն հետ. պէտք է միայն գտնել նրան: Նա իր հետ կուղեւորուի դէպի այն գեղեցիկ անտառը, և թզուկը նրան օրն ի բուն կըզուարձացնի իր պարերով: Այդ մտքի վրայ ուրախութեան կայծ է շողում թզուկի աչքերում, և նա դիմում է դէպի հետեւալ սենեակը:

Սա արդէն բոլոր սենեակներից ամենից աւելի փայլունն էր ու սքանչելին: Պատերը պատառած էին նուրբ վարդագոյն կերպասով, վըրան գործուած էին թոչուններ ու արծաթէ հիասքանչ ծաղիկներ: Ամբողջ արդ ու զարդը կուռ արծաթից էր և ներկայացնում էր մի հիանալի ծաղկէշղթայ թոչող ամուրներով զարդարուած: Երկու մեծ հրակալներ, որոնց վրայ թութակներ ու սիրամարգեր կային ասղնեգործած, դրուած էին բուխարիների առաջ. իսկ ծովի ալիքների

գոյն ունեցող եղնգաքարից շինուած յատակը, կարծես գնում կորչում էր ծաւալուող անհունի մէջ: Եւ թզուկը մենակ չէր այդտեղ: Սենեակի հեռաւոր անկիւնում, դռնից ընկած ստուերում նա նկատեց, մի փոքրիկ կերպարանք, որ իրեն էր նայում: Սիրտը սկսեց տրոփալ, ցնծալից մի ճիչ պոռթկաց նրա կրծքից և նա առաջ անցաւ այն լուսավառ սենեակի միջով: Կերպարանքն էլ սկսեց գալ իրեն ընդառաջ, այնպէս որ թզուկն արդէն պարզ ու որոշ տեսնում էր նրան:

Արքայադուստրն է արդեօք... Օ՛, ոչ: Դա մի խրտուիլակ է, աւելի այլանդակ, քան ինքը տեսել է երբ և իցէ՞ մարմնի կազմուածքով նման չէ միւս մարդկանց, սապատող է, ծոմոռուած ոտներով, ահագին ճօճուող գլխով ու սե-սե մազերի բաշով: Թզուկը կնճոեց ճակատը—նոյնն արաւայլանդակը: Նա ծիծաղեց, իսկոյն և եթ ծիծաղեց նաև այն հրէշը և նոյն շարժումն արաւ ձեռքով, ինչ որ ինքը: Նա ծաղրելով գլուխ տուաւ հրէշին և նոյնպիսի պատասխան ստացաւ նրանից: Թզուկը գնաց նրան ընդառաջ, խրտուիլակն էլ նոյնն արաւ, հետեւելով նրա իւրաքանչիւր բայլին, կանգ առնելով նրա հետ միաժամանակ: Յուղուած առաջ վազեց նա, ձեռքը ձգած և ահա այն աճոռնիի սառցանման ցուրտ ձեռքը հպուեց իր ձեռքին: Նա սարսափահար քաշցեց ձեռքը—հրէշն էլ նոյնպէս: Նա աշխա-

տում էր առաջ գնալ, բայց ինչ որ ողորկ ու պինդ բան արգելք էր հանդիսանում։ Այժմ արդէն բոլորովին իր առաջն էր այն խրտուիլակի դէմքը, նայեց ուշադրութեամբ, կարծես թէ երկիւղից այլանդակուած լինէր հրէշի դէմքը։ Թզուկը յետ գցեց աշքերի վրայ թափուած մազերը—հրէշն էլ ճիշտ միենոյնն արաւ։ Խըֆեց նրան—խրտուիլակն էլ հարուածեց նոյն ձևով. նա սկսեց դէմքը ծամածոել—նոյնպիսի ծամածութիւններ էր անում նաև հրէշը։ Նա ընկրկեց թափով, արագ յետ ցատկեց նաև հրէշը։

Այս ի՞նչ է։ Նա մի փոքր մտածեց և ապա սկսեց ուշի ուշով դիտել սենեակը։

Զարմանալին էր. կարծես թէ բոլոր առարկաներն իրենց կրկնակին ունենային այս անտեսանելի, ջրի նման թափանցիկ պատի մէջ։ Այն, նրա մէջ արտացոլուած էին բոլոր պատկերները, բոլոր աթոռները։ Դուան մօտ խորշի մէջ դրուած ֆաւնը *) իր ճշգրիտ կրկնութիւնն ունէր այն պատի մէջ, իսկ արևի ճաճանչներով հեղեղուած արծաթէ վեներանն **) ձեռքերը տարածել էր դէպի իրեն նման չքնաղ մի այլ վեներա։

*) Ֆաւն—դաշտերի ու անտառների աստուած. այստեղ—ֆաւնի արձանը։

Ծանօթ. հայ թարգմ.

**) Վեներա—գեղեցկութեան ու սիրոյ աստուածուհի. այստեղ—վեներայի արձանը։

Ծանօթ. հայ թարգմ.

Գուցէ արձագանքն էր այդ։ Մի անգամ նա բարձրաձայն կանչում էր հովտում և արձագանքը բառ առ բառ պատասխանում էր նրան։ Կարող է արդեօք արձագանքը այնպէս անդրադարձնել առարկաներ, ինչպէս յետ է դարձնում ձայներ։ Արդեօք կարող է նա ստեղծել ստուերների մի այնպիսի աշխարհ, որ իրականութեան ճշգրիտ պատճէնը լինի։ Առարկաների ստուերները միթէ գոյներ ունեն, միթէ ապրում, շարժւում են։ Զէ, չի կարող լինել...

Ունա ցնցուեց յանկարծ, պոկեց իր կրծքից գեղեցիկ սպիտակ վարդը, շուռ եկաւ ու սկսեց համբուրել նրան։ Հրէշն էլ ճիշտ իր նման սպիտակ վարդ ունէր բռնած։ Նա նոյնպէս իր նման համբուրում էր վարդը ու սեղմում կրծքին՝ վայրենի ծամածութիւններ անելով։

Թզուկը յանկարծ ամեն ինչ հասկացաւ… Հիասթափութեան սուր ճիշ արձակելով նա ընկաւ յատակի վրայ և սկսեց լալ, Ո՞հ, նա ինքն է այդպէս այլանդակ, սապատող, զզուելի տեսքով ու ծիծաղաշարժ։ Նա ինքն է այն խրտուիլակը, և երեխաները ծաղրել են իրեն, իսկ փոքրիկ արբայագուստը ծիծաղելիս է եղել իր այլանդակութեան, իր ծուռումուռ ոտների վրայ և ոչ թէ սիրել, հաւանել է իրեն։ Ինչու չմողին անտառի մէջ, որտեղ իր այլանդակութիւնը ցոյց տուող հայելիներ չկան։ Ինչու չսպանեց հայրն իրեն, որ ուրիշների ծաղը

ու ծանակի առարկայ չդառնար: Աղի արցունքներ էին քամւում աչքերից ու նա գլտում էր սպիտակ վարդը: Նոյնն էր անում նաև հրէշը յատակի վրայ, ցըիւ տալով սպիտակ ծաղկաթերթերը օդի մէջ: Նա սողում էր յատակի վրայ, իսկ երբ թզուկը նայեց նրան, տեսաւ որ դէմքը այլայլուած էր ցաւից: Թը գուկը շուռ եկաւ, որ չտեսնի հրէշին և դէմքը ձեռքերի մէջ առաւ: Նա վիրաւոր գաղանի պէս փորսող տալով դիմեց դէպի ստուերը և պառկեց այնտեղ ծանր հառաչելով:

Հէնց այդ ժամանակ ներս մտաւ արքայադուստրը իր ընկերներով շրջապատուած: Տեսնելով որ անճունի թզուկը իր փոքրիկ բոռնցքներով խփում է յատակին, տարօրինակ ու վայրենի ծամածութիւններ անելով, երեխաները սկսեցին ուրախ-զուարթ հոհուալ, շրջապատեցին նրան ու սկսեցին դիտել.

—Նրա պարերը ծիծաղաշարժ էին, բայց խաղն աւելի զուարճալի է եղել, —ասաւ արքայադուստրը: —Ճշմարիտ, նա կարող է մրցել մարիօնետների հետ, միայն թէ նրանց պէս ընական չէ սրա խաղը, —բացականչեց նա և ծափ տուաւ իր մեծ հովհարը շարժելով:

Բայց թզուկը չէր նայում նրանց. հետզհետէ մեղմանում էին նրա հառաչները, և յանկարծ տարօրինակ հառաչ արձակելով նա բըռնեց կողքը: Ապա վայր ընկաւ ու անշարժացաւ:

—Հրաշալի՛ է, —ասաւ արքայադուստրը մի քիչ լոելուց յետոյ, —իսկ հիմա վեր կաց, մի քիչ պար արի ինձ համար:

—Հա, հա, հա, —աղաղակեցին մանուկները, —վեր կաց ու պար արի. չէ՞ որ դու զուարճալի ես աֆրիկական կապիկների պէս ու նրանցից աւելի ծիծաղաշարժ:

Բայց թզուկը դարձեալ լուռ էր:

Արքայադուստրը ոտքը խփեց գետնին ու կանչեց հօրեղբօրը, որը սենեկապետի հետ միասին զբունում էր տէրրասի վրայ:

—Իմ ծիծաղաշարժ թզուկը կամակորութիւն է անում, —բացականչեցնա: —Վեր կացրէք, խնդրեմ, նրան ու հրամայեցէք, որ պար գայ իմ առաջ:

Իշխանները ժպտացին և կամաց մօտեցան մանուկներին: Դոն Պեղրօն կոացաւ ու ձեռնոցով թեթև տուաւ թզուկի այտին:

—Վեր կաց, պար արի, ա թզուկ, վեր կաց, ասում էր նա: — Խսպանիայի և Հնդկաստանի ինքանտան կամենում է, որ դու զուարճացնես իրեն:

Թզուկը մնաց անշարժ:

—Պէտք է վերակացուին կանչել, —անբաւական ձայնով ասաւ Դոն Պեղրօն ու գնաց դէպի տէրրաս: Իսկ սենեկապետը լուրջ դէմք ընդունած խոնարհուեց թզուկի վրայ և ձեռքը դրաւ նրա կրծքին: Մի բանի ըոպէից յետոյ

բարձրացաւ ու խորը գլուխ տալով ասաւ արքայագստին:

— Միրուն արքայադուստր, ձեր զուարճալի թզուկը այսուհետև էլ երբէք չի պարի. Շատ ցաւալի է, որովհետև նրա այլանդակութիւնը թագաւորին էլ կարող էր ուրախացնել:

— Ինչու չի պարի այլևս, — ծիծաղելով հարցրեց արքայադուստրը:

— Որովհետև սիրտը պատռուել է, — պատասխանեց սենեկապետը:

Արքայադուստրը կնճռեց ճակատը, արհամարհանք էին արտայայտում նրա վարդանման նուրբ շուրջերը:

— Այսուհետև նրանք ամենքը, որոնք ինձ մօտ խաղալու կը գան, թող ամեննին սիրտ չունենան, — բացականչեց նա ու վազեց դէպի պարտէզ:



| | |
|--------------------------------|----|
| 25. Խըամնատի եզերքին | 10 |
| 26. Հրատատիկներ | 40 |
| 27. Կատակերգութիւն գոմի բակում | 12 |
| 28. Նոր մայրիկս | 10 |
| 29. Բախտը ինչնամն էր | 8 |
| 30. Եօկին եւ եակին | 5 |
| 31. Փոքրիկ Լեւոնի գաղտնիքը | 7 |
| 32. Կարլ Լինէյ. | 20 |
| 33. Յիսուսի տօնածառը: | |
| Մարգարտածաղիկն ու արտուրը | 10 |
| 34. Փոքրիկ Հարրիի պարտէզը | 15 |
| 35. Արքայադուստրն ու Թօգուկը | 10 |



